ԱՐՄԱՎԻՐ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՓԱՂԱՓԱԿԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամերիկաի համար տարեկան 4 ոսկւոր թղթադրամ.
Եւրոպաի և այլ տեղերի համար տրկն. 20 Ֆրանգ
Տնօրէնութիւնն ինք կը վճարէ փոստի ծախքը։
Բաժնեգիրները կանխիկ կը վճարուին։ Վեցամսեայ կամ եռամսեայ բաժնորդագրութիւններ ալ կընդունուին, առանց ուշ յաւելման բաժնեգինն վրայ։
Խմբագիր-Տնօրէնին հետ կարելի է տեսնուիլ խմբագրատունը (rue Vacon, 50) ամեն օր կէսօրէնյետոյ, ժամ 2էն մինչև 4 մտնէ։

Ե ՏԱՐԻ ԹԻՒ 51

1887 ՓԵՏՐՎԱՐ 16

(ՓԵՏՐՎԱՐ 4 Հ. Տ.)

ՕՐԵՔՐԱՏԱԿՈՒԹԻՒՆ

Կը հրատարակուի Դշ. և Շբթ. օրեր

ՊԱՏՄԱՆՆԵՐ

Ծանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն
Ծանուցման 1 միջակ գիրը 1 սանդիմ կարժէ. 1 սանդիմ։
Նամակ կամ ծրար պէտք է դրկել խմբագրութ[ի]ւն հասցէով· M. PORTOUKALIAN, rédacteur du jou[rnal] MARSEILLE (France)

Les annonces, en français et en arménien, sont reçues au bureau dela Rédaction (Rue Vacon, 50)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայ ընտանիքը.—«Union Méditerranéenne»ի հիմնադրութեան խնջոյքին մէջ Հայերին նկատմամբ խօսուած ճառերը.—Հայկական խնդիրն եւ Փարիզի օսմանեան դեսպանատունը.—Վահմ. Ստեփան փաշա Ապահեան. — «Արմենիա»ին նպաստ. — Վրիպակ.—Արտասահմանի լուրեր. — Առեւտրական.—Ծանուցամներ. — Բանասիրական (Վանայ ձմեռ.):

ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԸ

Կինը Եւրոպաի մէջ իւր էրկան ընկերն է, նորա խորհրդակից և չատ անգամ գործակիցն է։ Իսկ Հայերի մէջ Թիւրքիա, Ռուսիա, և այլն, կինը տան մէջ ծառայող է միայն և ո՛չ մտնականութիւն, ո՛չ ալ տեղեկութիւն ունի բնաւ իւր էրկան գործերին։

Հայերի մէջ մի ամբողջ ընտանիքի գրամական պէտքերը հայթայթելու աշխատողը մէկ անձ կը լինի չատ անգամ, կամ էրկա, թէև ընտանիքը 7–8 անձերէ ալ բազկացած լինի. թէ՛ Կ. Պոլիս և թէ՛ գաւառական քաղաքներն հայ ընտանեկան կացութիւնն այնպէս է որ չատ անգամ բազմաթիւ անդամներէ բազկացած մէկ ընտանիքի ապրուստը կընայի մէկ մարդի ձեռքին միայն որ կամ հայրն է այդ ընտանիքի և կամ անհայր մնացած մէկ հատիկ երիտասարդ տղան կինը տան արտաքին գործերուն հետ կապ չունի բնաւ և չի ալ հասկնար, այնպէս որ տան գլխաւորը, տանապրուստը հոգացող մէկ հատիկ անձը եթէ մեռնի, անոր գործն ալ հետը մէկտեղ կը մեռնի, տունն ալ հետը մէկտեղ կը քանդուի վի այն տան մարդիկը խեղճ և ողորմելի վիճակի կընթարկուին քանի որ տան տիկինը չէ կարող մեռնողի գործը չարունակել։ Այս վատակար դրութեան հետեւանքը սա է որ երբ մի հայ ընտանիքի գլխաւորը կը մեռնի առանց բաւականաչափ հարստութիւն թողլու որ անոր եկամտաներով կարենան ապրիլ, այնուհետև նորա ընտանիք թշուառութեան մէջ կիյնայ։ Եւ որովհետև հարստութիւնը հեղհեղտէ կը պակսի Հայերին մէջ և օրաւրէն չահով ապրողներն մեծ մաս կը կազմեն արդէն, այդ դառակարգի պատկանող քանի հայ տան գլխաւորը որ մեռնի, այնչափ աւելի կը չատնան մեր մէջ քանդուած տուներ, թշուառացած ընտանիքներ։ Բայց Եւրոպաի մէջ այդպէս չէ. կինը տան ապառուհի չհամարուիր միայն, այլեւս իւր էրկան խորհրդակիցն է, առևտրի ընկերն է, նորա խանութի հաշուապահն, գանձապահն է և այլն. այնպէս որ եթէ մի օր այրը մեռնի կամ ծանրապէս հիւանդանայ, անոր գործերն ալ բաղդովին չեն խանգարուիր և այն ընտանիքի ապագայն ալ իրեն հետ միասին չմեռնիր, այլ կինը կը չարունակէ էրկան գործը, որին արդէն ծանօթ էր ինք ալ մէջը գործունեութիւն ընելով։ Եւրոպաի մէջ ընտանիքի կազմակերպութիւնը այնպէս է, ընտանեկան աշխատանքի բաժանում մէրն այնպէս կարգի դրուած են որ տան մէջ ոչչափ պատասխ կայ, գրեթէ նոյնչափ ալ աշխատող, նոյնչափ ալ ապրուստ հայթայթող կայ։ Ծրան երբ չափահաս կը լինի, աղջիկ կամ մանչ, կը սկսի մի աշխատութեամբ զբաղիլ և հայ բերել տուն իւր կրցածի չափ։

Հայաստանի չատ գիւղերին մէջ կինը մինչև մի աստիճան աշխատակից է իւր էրկան և այդ մեծ բարիք է տան համար։ Բայց քաղաքներին մէջ ուր կինը փակուած պաշարուած է տան ներքին գործերով միայն, ուր ո՛չ գիւղական դիւրակեցութիւններն և ո՛չ ալ Եւրոպաի ընկերական ազատութիւնները կը տիրեն, հայ կինը իւր փոքրիկ գաւակներով ամեն րոպէ վտանգի տակ կը գտնուի իւր էրկան մահուամբ։ Մեր ազգային ընտանեկան կացութեան ամենատխուր կողմերէ մին ալ այս է։

Մ. փ.

Կաթուղիկոս դիւրութիւն ունեցաւ Սովետոց յանձնաժողովի նպաստ դրկած դրամով իւր ապառիկ պարտիներ գանձել։ Ինչ և է. գոնանք վան։

Մեր տուները հողով չինուած են, առանց աղիւսներ եփելու։ Տանիքներն ալ հողով ծածկուած են և փոխանակ ուրիշ տեղերու պէս բրգաձեւ կորնթարդ լինելու, մի քիչ գոգաւոր են։ Այս պայմանները կը տոկային զմեզ ամեն անգամ, երբ ձիւն տեղայ, տանիք եղնել և սրբել, տանիքի բաժինը փողոցին բեռնաւորելով։ Երբեմն ցաւալի արկածներ տեղի կունենան և գառնին (ձիւն սրբող) իւր վար մղած ձիւնին կ'ընկերանայ։ Այս տարի մինուլորտ ժլատ է իւր պարգեւին մէջ, բայց կը պատահին տարիներ որ մեր քաղաքամէջի փողոցները այնքան կը լեցուին ձեան կոյտերով որ անոնց յատակը գրեթէ կը հաւասարի տանիքներուն և բնակիչներ կը ստիպուին փոս մը չինել իւրաքանչիւր դրան առջեւ և անոր ալ ու ձախ կողմերն ալ ձիւն տալով 15–20 մատ սանդուղ պատրաստել։ Տարեց մարդեր կը պատմեն որ 20 տարիի չափ առաջ աւելի ձիւն կը տեղար մեր երկրին վրայ քան այս տարիներ։ Չգիտեմ թէ ինչ տեսակ պատճառներ ծնած են այս եղելութիւն, բայց սա կայ որ վերջին տարիներս վայտի սպառումը բաղդատաբար խիստ չատ ածած է և լեռի հարաւային ափերու անտառներէն չատերու հետքեր միայն մնացած են։ Այսպէս երբ ձիւն բաղդատաբար նուազ կը տեղայ, լեռի ջուրերն ալ կը քաշուին։ Այս առթով աւելորդ չեմ համարիր մի դիտողութիւն անել։ Հայր Ֆանթարեան, վէնետիկցի Մխիթարեան, իր երկրաբանութեան մէջ կը գրէ որ նախկին Աղթամար քաղաքի ջրով ծածկուիլն առաջ եկած է երկրի մանական փլուզմէն։ Եթէ Աղթամար քաղաքը միայն լիներ թաղուած ջրի տակ, Հայր Սուրբի բացատրութեան կարելի էր հաւատալ։ բայց որովհետև նախկին Արճէշ, Արծկէ, Աւանց, Նոր Գիւղ և. և. վանայ լճի բոլորտիքը գտնուող աւաններ և գիւղերն ալ Աղթամարի բաղդին արժանացած են, չէ կարելի հաւատ ընծայել Հայր Ֆանթարեանի ենթադրութեանը և պէտք կը լինի ուրիշ պատճառներու մէջ փնտռել այդ երեւոյթի բացատրութիւնը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՆԱՑ ՁՄԵՌԸ

Յունար 5։ Ջերմաչափ կծկուեր է 0էն 5-10 աստիճան վար։ Ձիւն կը պատէ ամեն կողմ. իր ցրտեր արեգական ճառագայթներուն տակ կը ցուցնեն թէ որչա՜փ գեղեցիկ է այդ սպիտակ մարմինը, մանաւանդ երբ փնջաձեւ չարուած մակերես մը կը ներկայէ կամ երբ բոյսի մը ճիւղերուն վրայ սառուրնեան ծառ մը ձեւացուցեր է։ Ջերմաչափի անդկին հետ ամեն մարմին կծկուած է. միայն ջուրն է որ տարբեր տեսարան մը կը պարզէ։ Մեր փողոցներու ուռենիներու տակէն վազող ջրի առուներ կարծես թէ ախտաւորի նման ուռած ծակոտուած են։ Ջուր իւր անկողնէն ելնելով փողոցին մէջ տարածուեր է և սառեր։ Խեղճ Այգեստանցիներ որ ղուրկ են քաղաքակիրթ երկիրներու կառքերէն և ուրիշ դիւրութիւններէն, օր երկու ժամ պէտք է քալեն կամ աւելի ճիշդ վազեն այդ սառապատ գետնի վրայ, յաճախ սայթաքելով և երբեմն ալ գետին գլորուելով։ Ասոնք փոքրագոյն համբորդութեան փոքրագոյն արկածներն են։ Մեծերու հանդիպելու համար երկար համբորդութեանց ձեռնարկելու է։ Ատ անդունդի մը բերան ձին տահելով կը գլորուի և քեզ ալ հետը կը տանի, եթէ անուշադիր մնաս։ Անդ կառք կը չրջուի և կը դառնայ բանտ. բարեբաղդ կը լինիս եթէ տեղ մը չէ ճմլուած կամ անդամներդ չեն կոտրած։ Ուրիշ տեղ ալ վտակէ մ'անցնիլ պէտք է։ ահա ջրի կեղեւ՝ սառոյցը կը կոտրի և ձին կը խրուի. եթէ դու ալ թրջուես, քո բան բուսեր է. քանի մը վայրկեան վերջ փայտ կը կտրես։ Ձամբուդ վրայ յաճախ կրնաս հանդիպիլ մինդ մուշքիրի գայլերու և գոյքիդ մուշքիրի քիւրդերու։ Հապա բուք և ուսին! վար չեն մնար իրարմէ։ Հերու՝ քաղաքի դռնէն հարիւր 10 կանդուն հեռի՝ մի մարդ անշնչացուցած էր բուք։ Ուսինի մասին ալ իրը օրինակ բաւ կը համարիմ յիշեցնել Շատախի արկածը որ թերեւս մոռցուած չէ տակաւին ազգային լուրերով հետաքրքրուողներէդն։ Անցողակի միայն ասեմ որ այն արկած, ինչուներէ զատ, Շատախցիներու մարմնաւոր մեղքերը քաւելու օգուտն ալ ունեցաւ, որովհետև Ս.

«UNION MÉDITERRANÉENNE»Ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԽՆՋՈՅԻՆ ՄԷՋ ՀԱՅԵՐԻՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՕՍՈՒԱԾ ՃԱՌԵՐՆ

(Շարունակութիւն 50րդ. թիւէն եւ վերջ)

Երբ Պրն. Ց. Խաքէնեաէր իւր ճառը վերջացուցած է, չատեր մօտեցած են իրեն իւր ձեռք սեղմել և իրենց շնորհակալութիւն յայտնել, մի քանի խօսք ևս իրենք խօսելով Արմենիաի մասին։

Այդ ժամանակ Պ. Լուսեար Մարթօ, Revue Françaiseի տնօրէնը սկսած է խօսիլ և իւր ճառ տեսած է մէկ ժամի չափ։ Ներկայ գտնուող օտարազգիներն Պ. Մարթօի յանպատրաստից խօսած այդ ճառի վերջին մասը միայն դրի առնել յաջողած լինելով, մենք ևս նորա թարգմանութիւնն միայն պիտի կրնանք տալ մեր ընթերցողներին։

Պ. Մարթօ ի սկզբան յայտարարած է այն բնդհանրական դգայուններ որ Revue Françaiseի խմբագրութիւնն և «Հայ Հայրենասիրական ընկերակցութիւնն» իրարու մօտեցուցած են։ Ցեսայ յիշեցուցած է որ տակաւին մի տարի չէ անցած որ այդ տնօրէնիս Հանդէսի մէջ հրատարակուեցան երկու հիմնաւոր յօդուածներ «Հայկական խնդրին» նկատմամբ որոնց նպատակը ոչ խռովութեան հրդեհ ձգել էր, ո՛չ ալ մի յեղափո[խ]ական գործ տեսնել տալ, այլ միայն Հայ ազգին ներկայ դրութիւնը ցոյց տալ և Եւրոպացի ազատասէր ազգերուն համակրութիւնը գրգռել։ Ցեսայ ըսած է որ այդ յօդուածներն ինք գրած է և որ ինք ալ Հայ է։ Ցեսայ ըսած է որ Հայ ազգին ներկայ դրութիւնը ինքն ալ ուսումնասի

ARMENIA

ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ ՄԵՐ ՄԱՅՐԸ Է

Ֆրանսահայ գրող Ժորժ Փոլ Ֆրանսիայի մասին

Ֆրանսիայի մեծ գրողներից մեկը՝ Ժորժ Փոլ Ֆրանսիայի մասին գրել է. «Ֆրանսիան մեր հայրենիքը չէ, այլ մեր մայրը»։ Ֆրանսահայ գրողը ծնվել է Ֆրանսիայում, ֆրանսերեն է գրել իր գրքերը, ֆրանսիական մշակույթի ստեղծագործ ներկայացուցիչն է եղել։ Ֆրանսիան նրա համար հայրենիքի պես սիրելի է եղել։ Ֆրանսիայի հանդեպ նրա սերը ոչ միայն գրական է եղել, այլև՝ կենսական։ Ֆրանսիան նրա համար մայրն է եղել։

Ժորժ Փոլ Ֆրանսիայի ծնողները հայ էին։ Նրա մայրը՝ Ժանետ Ֆրանսիան, ծնվել է Կ. Պոլսում, ապրել է Փարիզում, Ժորժ Փոլ Ֆրանսիայի հայրը՝ Ալեքսանդր Ֆրանսիան, ծնվել է Ադրիանուպոլսում, ապրել է Կ. Պոլսում,

մյակէ։ Արհեստները խեղճ ողջմտի վիճակի մէջ ՃԱցած են, հաղորդակցութեան ճանապարհները չվինելուն համար։

Մենք Հայերս, իբր ազատ ազգ ապրելու մեր իրաւունքները կը պահանջենք և այդ բանի մէջ յաջողելու համար, կը խնդրենք, Պարոններ, ձեր վեհանձն աջակցութիւն։»

Պրն. Պրուսալեան այս խօսքերով վերջացուցած է իր ճառ և ամենքն ալ իրարմէ յառաջ անցնելով եկած են իր ձեռք սեղմել և իրենց քաղաքավարական խօսքերը ընել։

ՀԱՑԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ

ԵՒ ՓԱՐԻԶԻ ՕՍՄԱՆԵԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆԸ

—

Փարիզէն մեր հայրենակից Պրն. Ժան Պրուսալեան դրած է մեզ հետևեալը.

Mémorial Diplomatique լրագիրը որ Փարիզի օսմանեան դեսպանատան ձայնը կը ներկայացնէ, 87 փետրվար 5ի թիւին մէջ կը հրատարակէ հետևեալը որ հաղորդուած է իրեն։

«Արմէնիան քննադատութիւնների անսպառ նիւթ կը ներկայացնէ միշտ Օսմանեան կառավարութեան վրայ չարախօսողներին։ Մինարաէութիւն եղած է յարմար և անյարմար տեղ ի դուք շարժել միշտ այդ խեղճ Հայերի վիճակին վրայ որոնք իրենք ալ չեն գիտեր շատ անգամ թէ ի՛նչ պահանջներ կը ներկայացուին իրենց անունով։ Այսպէս վերջին օրերը խօսուեցաւ թէ Հայերի կողմէն մի դժգոհութիւն երևան եկած է որովհետև բռնական որոշումներէ ենթարկուելու կը համարին իրենց դպրոցներ և բանաւոր ու գործնական մի ուսում ջընջուելը։ Այդ նկատմամբ ներկայացուած ապացոյցներն սուտ են և մի բան միայն կը հաստատեն, այն է բեղմնաւոր մի երևակայութիւն ունենալը անոնց որոնք քննադատութեան վարժութիւնները կընեն ի վնաս Թիւրքիոյ և մի նշանաբան առած են իրար որ երբ մի որոշուած դրութիւն պատապարեն անդադար Թիւրքիա-ոմանք նախարարութիւնը վերջին ժամանակներ Հայերին նկատմամբ ոչ մի այդպիսի մտանաւոր որոշում ըրած չէ։ Նա կատարելապէս ազատ թողած է ղերձնոց դպրոցները հիմնելու կամ բանալու։ Նա կը յարգէ անոնց, ինչպէս նաև Օսմ. կայսրութեան միւս բոլոր քրիստոնեայ հատուածներուն լեզուն, ազգութիւնը և կրօնը։ Կըրթական դործին իր միջամտութիւն եղած է միշտ այն սահմաններուն մէջ որ իր վերահսկողութեան իրաւունքը, նոյն իսկ իր անձուկ նշանակութեամբ առնելով, կը թոյլատրէ իրեն ըստ բաւականին։ Ռուսիան և Բրուսիան շատ աւելի խիստ կը վարուին Բոլոնիայցիներուն դպրոցներուն համար, անոնք կը չգտան այդպիսի բռնութիւններով չնջել ազգայնութիւնը այն տարրերուն որոնք իրենց համար նեղ կը դիտեն դժգոհութիւններուն մի պատճառ եղած են։ Բայց այդպէս չէ Թիւրքիոյ մէջ ուր ամեն ազգութիւններ քովիքով կապրին և կը զարգանան Օսմ. Վեհապետների հովանաւորութեան տակ որոնք միշտ նախանձ են ցուցուցած Օսմանեան կառավարիչներուն ներողամտութիւնը հայոց քրիստոնեայ հպատակներուն համար՝ ապացուցուած է և կապացուցուի դեռ ամեն օր. այդ հպատակներէ պահանջուածներն համեմատութեան չատ թեթև բաներ են և կատարելապէս օրինաւոր են ուէ հաստատուած կառավարութեան համար։ Ասիկա հանրածանօթ մի ճշմարտութիւն է որի վրայ պէտք էր որ խորհէին անոնք որ միշտ կը ջանան խոչընդոտներ ընել որպէսզի այս տալ կամ այլափոխել իշխանութեան կատարած վարչական գործերն Թիւրքիոյ մէջ։»

Անոնք որ գիտեն օսմանեան դիւանագիտութեան գաղանիքները և կը գնահատեն նորա յայտարարութիւնների արժէքը, չեն զարմանար նորա այս հնարագիտութեան վրայ. կեղծաւորութեամբ յարգանք ժատուցանել է այս՝ առաքինութեան։ Ասանց մանրամասնօրէն բացատրելու այսօրուայ Մէմօրիալ Տիփլօմաթիքի հաղորդուած տեղեկութեան արժէքը և յայս ունենալով որ ատոր դէմ լուրջ պատասխաններ կը տրուին Փարիզի լրագիրներուն մէջ ամենաբացայայտ կերպով հերքելու համար այն առասպելաբանութիւնները որոնցմով կուրանան ճշմարտութիւնը անպատկառ կերպով, մենք առայժմ բաւական կը համարինք դիտել տալ թէ վերոյիշեալ կիսազաւօնական դրուածքը կը յարձակի մեր վրայ անորոշ կերպով և առանց ճշդելու իր ըսածները. և թէ արդարացի չէ Թիւրքիան համեմատել Ռուսիան և Բրուսիան հետ։ Օսմանեան կայսրութիւնը մի Պետութիւն չէ, այլ քաղաքական մի դիակ է որ քրքրուելու վրայ է։ Ամէն ղատ, Ռուսիան և Բրուսիան զարգացուած չեն ճանչնալու մի այնպիսի Սահմանադրութիւն լինչպէս որ մենք ունինք և որ մեզ չնորհած է մի բացարձակ իրաւունք մեր ներքին վարչական և մեր կրօնական պաշտօնի դործերն վարելու ամենայն ազատութեամբ։ Եւ այս մի ներողամտութիւն, մի չնորհ չէ Թիւրքիոյ կողմէ, այլ իւր մէկ պարտաւորութիւն է. Թիւրքիան այս ազատութիւն տուած է իւր քրիստոնեայ հպատակներն, փոխարէնն այն իրաւունքի որ ստացաւ ինք մտնակցելու համար եւրոպական վհատութիւններուն և որ եւրոպան չնորհեց իրեն 1856ին Փարիզի վհատաժողովին մէջ։ Համիտի-Հիւմայունի հանդիսաւոր հրատարակութիւնէն յետոյ էր որ չնորհուեցաւ իրեն այդ իրաւունք զոր չունէր մինչև այդ տաեն։ Ըստ որում Թիւրքիան կը դժգոհէ այժմ 1856ին տուած պատասխանած պարտաւորութիւններէն, պէտք է որ եւրոպան ալ չճանչէ եւրոպական համաձայնութեան մէջ նորա ներկայ դանուելու իրաւունքը, որովհետև երկկողմանի (synallagmatique) պայման կայ։

Դոհ ենք մենք տեսնելով ապացոյցը որ մեր չանքերը ապարդիւն չեն ՃԱցած, որովհետև մեր այդ աշխատութիւնները սկսած են յուզել օսմանեան դեսպանատունը։ ՎԻՃՄԱԲԱՆՈՒԹԵՆԷՆ ԼՈՑՄ ԿԸ ՇԱԴԻ։ Խօսք հարկ ողջին չատ բարև՛։

ՎՍԵՄ · ՍՏԵՓԱՆ ՓԱՇԱ ԱՍԼԱՆԵԱՆ

—

Կիմանանք որ Վսեմ. Ստեփան փաշա Ասլանեան Կ. Պոլսէն եկած է փարիզ ուր մի քանի օր անցուցնելէ յետոյ գնացած է Փարիզի ժօտակայքը իւր Մեծապատիւ որդւոյ և Աղնուափայլ քրոջ մօտ։ Ն. Վսեմութիւն իւր վարած բարձր պաշտօններով կարևոր ծառայութիւններ մատուցած լինելով թէ՛ հայ ազգին և թէ՛ Օսմանեան տէրութեան, ուրախալի է որ Փարիզի հայ գաղթականութիւնը մի պատուաւոր, փոքրամարդ և ազդեցիկ անձ ևս կունենայ իւր մէջ։

«ԱՐՄԷՆԻԱ»ԻՆ ՆՊԱՍՏ

Շնորհակալութեամբ ստացանք 200 ֆրանք Թիւրքիահ Ս. քաղաքէն մի հայրենասէր Հայէ որ սոյն նուէրը ղրկելով յայտնած է իւր չերմ համակրութիւն «Արմէնիա»ի ուղղութեան համար և քաջալերած է ղայն նիւթապէս և բարոյապէս։

ՎՐԻՊԱԿ

—

«Մ՛ուր Ճաց Պալկարիոյ Առաջնորդական Խնդիրը» վերնագրով նախորդ թիւին մէջ հրատարակուած յօդուածի տակ, մոռացմամբ չէ դրուած տառագրագրութիւնն «Լևան Փիւշիւքեան» և քաղաքի անունն «Շումլա»։

ԱՐՏԱՍՈՎՀԱՆԻ ԼՈՒԲԵՐ

Կ. Պոլսէն եկած վերջին լուրերը նախատեսել կուտան պալկարական խնդրի մասին բանակցութիւնների վերջնական անյաջողութիւնը։ Կը թուի թէ բանակցութիւնների խղումը և հետևապէս Ռուսիան ունենալիք ընթացքը մտահոգութիւն կը պատճառէ։

—Սոֆիայէն կիմացուցեն որ պալկար վախճատական սպայները, բանակին ուղղած յայտարարութեան մէջ, կը յայտարարեն որ մի մեծ փոխառութեան պայմանագրութիւն ունքեր են Պալկարիահ հաշուին որ անմիջապէս պիտի վճարուի, երբ իրենք իշխանութեան անցնին։ Կրեմէֆ և Պանտերֆ սպայներ որոնք Բուխարեստի մէջ արգելքի տակ կը պահուէին, վախճատական սպայներուն ամսական նպաստ կը տայ։ Համպանակութիւն բացուած է սերպօ-պալկար պատերազմին մէջ մեռնող զօրքերուն մի վիճաւտակարան կանդնելու համար։

—Ալմանիահ խորհրդարանական ատկումբներուն մէջ չկարծուիր որ Բայխոտակը զգալի փոփոխութիւն կրէ, թէև կառավարութիւն իւր ընտրելիների յաջողութեան համար ամեն ազդեցութիւն և բռնութիւն ի գործ կը դնէ։ Հաւանօրէն յառաջդիմականները մի տասնեակ աթոռ պիտի կորսնցունեն, կղերականները երկու կամ երեք, ընկերվարականները բնաւ։ Ինչ որ թուի թէ խորհրդարանական մի նոր լծուժ խոյս տալու համար եօթանժեայն պիտի քուէարկուի և հակառակութիւն պիտի հանուի խնայողական ծրագիրների և ծախսատի ոգելից ըմպելիների առանձնաշնորհումներուն դէմ։

—Հումէն եկած մի հեռագրի նայելով, նախարարական ատգնաժողովը կաւին վերջացած չէ. սակայն եւ այնպէս չեն տարակուսիր որ Պ. Ֆէվրէտիս պիտի ընդունի նախարարութիւն կազմելու պաշտօնը, համաձայնութեամբ Պ. տը Ռուվիլանի, նախկին արտաքին գործերի նախարարին։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՓԵՏՐՎԱՐ 8ԷՆ 15

ԳԵՐԱՑՈՒԹԻՒՆ

ԲՈՒԻՐԴ. Հրապարակի վրայ մեծ չարժում չըլլալով գործերը սահմանափակ են. չարքաւս վաճառուները 1200 հակի կը հասնին, որոյմէ կը նշանակեմք՝ 550 հակ Խորասան սպիտակները 150 դունաւորները 120 ֆր. 120 հակ Հալէպի չը լուացուած սպիտակ 132½ ֆր. 60 հակ Գաղատաի դունաւոր 160–162½ ֆր. 50 հակ Մուսուլի կէս լուացուած դունաւոր 135–137½ ֆր. 100 քիլօն։

ԲԱՄՊԱԿ. Անգործութիւնը կը շարունակէ, օրուան գիները՝ Սելանիկ և Կիպրոս 55էն 60 ֆր. Զմիւռնիա 55–57 ֆր. Սիրիոյ ապրանքները 48–52 ֆր. 50 քիլօն։

ՄԵՏՈՒՍԵՂԷ. Շատ ծանր կերթայ, չարքաւս վաճառուները 15 հակ մուտքա որոյմէ 4 հակը Նուխիի 49 ֆր.էն 2600 քիլօ Նուխիի չարը 3, 85 ֆր.է քիլօն։

ԿԱՆԵՓ. Դժուար կը վաճառուի, գիները 55էն 64 ֆր. 100 քիլօն։

ՅՈՐԵՆ. Ընտիր ապրանքներ 19էն 20½ ֆր. կը վճառուին, սորին և միջին տեսակները 15էն 18 ֆր. 100 քիլօն։

ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆ (maïs). 12¾ ֆր. 100 քիլօն։

ԼՈՒԲԻԱ. Խիստ դանդաղ է, Ռումանիոյ ապրանքները 14½–15½ ֆր. Սեւ Ծովու մաքրուած տեսակները 21–22 ֆր. 100 քիլօն։

ԹՈՋՆԱԿԵՐ (alpiste). 27½–28 ֆր.ի վրայ կը չարունակէ։

ՇՈՒՇՄԱ (sésames). 41–41½ ֆր. Թարսուս և Եափայի ապրանքները։

ԽԱՇԽԱՇ (pavots). 26. ֆր.ի վրայ թոյլ է։

ԿՏԱՒԱՀԱՏ. 24–24½ ֆր. 100 ք։

ԿԱՂԻՆ. Զը կտրածը 40 և կտրածը 92–93 ֆր. 100 քիլօն։

ԴԵՂՆԱՀԱՏ. 110էն 140 ֆր. 100 ք։

ՍՓՒՒ ՄՈՐՔ. Ըստ տեսակին 20էն 34 ֆր. տուփնան։

ԱՐՏԱՍՄՈՒԹԻՒՆ

ՇԱՔԱՐ. 42½ ֆր. 100 քիլօն։

ՍՈՒՐՃ. 76էն 87 ֆր. 50 քիլօն։

ՈՐԴԱՆ ԿԱՐՄԻՐ. 3, 20էն 4 ֆր. ք։

ՊՂՊՂ. 86էն 96 ֆր. 50 քիլօն։

Գ.

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

L'UNION MÉDITERRANÉENNE

Le premier numéro de l'Union Méditerranéenne, *revue bimensuelle des intérêts économiques du Monde Latin*, vient de paraitre chez Chaix en une livraison de 20 pages grand in-4° raisin, à deux colonnes, dont voici le sommaire :

Après vingt ans....	MM. M.-A. Gromier.
Les Hommes du jour	Abou-Naddara.
L'Union Méditerranéenne	Lutèce.
A Emilio Castelar..	Ch. Grandmougin.
Notre dîner de fondation: Discours de MM. Abou-Naddara, Iskender, Marbeau, Broussali, José Carrilho Videira, Nicolas Estévanez, René Vaillant, Louis Macon, Gromier	Gabriel Jacques.
Nos amis et nos journaux	M.-A. G.
Une visite à Sid El-Ghâli Ben'Azoûz.	Henri Duveyrier.
Les chambres de commerce françaises à l'étranger	Coint-Bavarot.
Le commerce de la France en Orient.	Dém. Georgiadès.
Revue des livres. L'art et la science au XIX° siècle....	A.-O. Munro.
Le Zollverein méditerranéen	Emile Gautier.
Les Sociétés de visiteurs de Paris en 1889	M.-A. G.

Bulletin financier et commercial. — Petite correspondance — Avis importants — Annonces.

On s'abonne en envoyant un mandat-poste de dix francs à son directeur-gérant, M.-A. GROMIER, 12, rue Cadet, Paris (*Un numéro séparé : 50 centimes*).

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱԶԳԻ

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԳԻՈՐԳԱՑ ԱՒՈՎԵԱՆՑ

Երրորդ տպագրութիւն

Ամեն Հայի համար անհրաժեշտ պարտք է իմանալ իւր ազգի պատմութիւնը, դիտնալ թէ ի՛նչպէս սկսաւ է իւր ազգ, ո՛րտեղ ունեցաւ է իւր հայրենիք, ի՛նչպէս եկաւ հասաւ է մեր օրերը, ո՛րոնք են եղած իւր երջանկութեան և իւր թշուառութեան պատճառները և այլն։

Գէորգ Աւովեանց որ Տփղիսի Ներսիսեան Վարժարանին մէջ Հայոց պատմութեան ուսուցիչ էր և որ յանկարծ մի օր երբ աշակերտները իրեն կը սպասէին Վարժարանին մէջ իւր ազէտլուր դասերը լսել, իմացաւ եւ յայտ թէ անյայտացեր է, իւր ուսանողած դասերի համառօտութիւնը գըրի վայ աւիրուած և թողած էր։ Այս պատճառ դէպք պատահած է 20 տարու չափ առաջ։ Իւր եղբայրը ի դուր ընդերկար նորա հետք զանազան քաղաքների մէջ փնտռելէ յետոյ, թէ՛ իւր անյայտացեալ եղբօր յիշատակը յաւերժացնելու և թէ՛ Հայոց պատմութիւնը ուսանիլ փափաքողներին մի դիւրութիւն ընծայած լինելու համար հրատարակած է նորա գրած սոյն «Համառօտութիւն Հայոց Ազգի պատմութեան»ը, որ մինչև այժմ երրորդ տպագրութեան արժանացած է։ Սկիզբը դրուած են Հայաստանի հին աշխարհագրութեան վերաբերեալ տեղեկութիւններ և պատմութիւնն ալ այնպիսի ոճով գրուած է որ թագաւորների կռիւներէն միայն չներկայացունէը, այլև կը պատկերացունէ ժողովրդի վիճակը։ Մանաւորապէս Կիլիկիոյ մէջ մեր թագաւորութիւն ունեցած ժամանակ Լասինեների դաշնակցութեան վրայ յոյս դնելով մեր կրած ազէտները և յետագարձութեան ալիքին ոճով գոյց արուած են։

Փափաքելի է որ ամեն Հայ իր տան մէջ ունենար դէթ մէկ օրինակ իւր ազգային պատմութեան դիւրքէն. կարդար և կարդացունէր իւր տան մէջ գտնուողներին։

Գ. Աբովեանցի «Հայոց պատմութեան» սոյն դասագիրքը կարելի է առանալ «Արմենիա»ի խմբագրատունէն, ղրկելով միայն 2 ֆրանգ մէկ օրինակի համար։ Խմբագրատունը ինք կը վճարէ փոստի ծախքը։ Մէկ անգամէն 10էն աւելի օրինակ գնողին զեղչ կը լինի։ Վճարքը չղրկուած գիրք չղրկուիր։

ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՑՈՅՑ 1887 ԹՈՒԱԿԱՆԻՆ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ
Ս. Փ. ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ
(Արամեան)

1887 տարւոյն Ընդարձակ Օրացոյցն հրատարակուեցաւ նախորդ տարիներէն չատ աւելի ճոխ։

Բովանդակութիւն

Բացի բուն Օրացոյցէն կը պարունակէ հետեւեալ վիճակագրական և բերու գիտելիքները։ Օսմանեան կայսրութիւն, — Աւագանի կայսերական պալատան, —Նախարարք Բ. Դրան, —Մեծ պաշտօնատարք Մայրաքաղքին, —Հրամանատարք բանակաց, —Դատակալք նահանգաց, — Գաւրիւքարքունք և ազգապետք, —Օսմանեան դեսպանք, —Դեսպանք օտար տերութեանց, — Վիճակագրութիւն Օսմ. կառավարութեան, — Հայազգի ատիճանաւորք և պաշտօնեայք Օսմ. տերութեան, — «Հայրապետութիւն Հայոց», —Եպիսկոպոսունք, — Ազգ. Կեդրոնական Վարչութիւն, — Ճանձնաժողովք, —Պաշտօնեայք Պատրիարքարանի,–Առաջնորդութիւնք Թուրքիոյ, Եգիպտոսի և տունք, —Հովուութիւնք, — Մայրավանք Թուրքիոյ, —Թաղօրայք Կ. Պոլսոյ, —Համագումար Թաղօրէից, — Բարեգործական և կրթական հաստատութիւնք, —Առաջնորդութիւնք ի Ռուսաստան և այլն,–Մայրավանք ի Ռուսաստան և այլն, – Կայսերական դերդաստան Ռուսիոյ, —Հայազգի ատիճանաւորք և պաշտօնեայք Ռուսական, Պարսկական և այլևայլ տերութեանց,–Հոգեւոր Հայ հաստարակութիւն,–Քաղքական Հայ հաստարակութիւն, — Դատաստանք պետական ուսումնարանի, —Բժիշկք քաղաքական և զինուորական, – Փաստաբանք, – Արուեստագէտք, – Լրագրողք,–Հեռագրութիւնք Թուրքիոյ և միջազգային,–Եւրոպական միջազգային Թղթատարութիւնք,–Եւրոպական Նաւահաստունք,–Ցամաքային Թղթատարութիւն Ասիական Թուրքիոյ,–Ժամացոյց ստրճանդակաց Օսմ. միջազգային Թղթատարութեան,–Յատկք երիթեւեկութեանց չոգենաւուց այլեայլ ընկերութեանց,–Պատկեր 1887 թուին, – Վիճակագրութիւնք օտար տերութեանց, – Ազգք,–Մանուցմունք։

Ներկայ տարւոյ Ընդարձակ Օրացոյցի ընդարձակութիւնը 320 երեսներու բարձրացած է։

Կը ծախուի «Արմենիա» լրագրի խմբագրատունը։ Գինը 75 սանթիմ։ փոստի ծախքը կը վճարէ խմբագրատունը։

Պարզ ՕՐԱՑՈՑՑ որի մէջ կայ Վ.Հ. Մակար Կաթողիկոսի պատկերը, կը ղրկուի փոստով 30 սանթիմի փոխարէն։

GUIDE MARITIME

Վաճառականներին և ճանապարհորդներին համար անհրաժեշտ մի շարաթաթերթ է այս որ կը հրատարակուի Պ. Շիլլերի անօրէնութեան տակ և Ֆրանսայի բոլոր նաւահանգիստներէն աշխարհի ամեն կողմեր գնացող չոգենաւերի մեկնելու օրերն կը ծանուցանէ պաշտօնապէս, վաճառականական լուրեր և գատավարութիւններ կը հաղորդէ և այլն։

Խմբագրապետութեան տեղն է Rue Vacon, 50, Marseille *և տարեկան բաժնոդագինն է 12 Ֆրանգ Մարսէյլի համար և 15 Ֆրանգ օտար քաղաքների համար։*

ՐԱՖՖԻ ԳՈՐԾԵՐԸ

ԿԱՅԾԵՐ

ՀԱՏՈՐ Ա

Ազգային վիպագիրը Պրն. Րաֆֆիի գործերին մէջ առաջին տեղը կը գրաւեն ԿԱՅԾԵՐը։ Այս գիրք կը ծանօթացունէ ընթերցողը տաճկական և պարսկական Հայաստանի գլխաւոր տեղերին հետ, հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կուտայ քուրդերի գաղանաղան ցեղերի և հայերի դրութեան, վարքի և բարքի մասին։ Նա ցոյց կը տայ այն ծրագիրը որին պէտք է հետեւին Հայաստանի մէջ գործել ուզողներն։ Մի խօսքով թէ՛ իրը ազգային ընտիր վիպասանութիւն և թէ՛ իրը հայրենասիրական գործունէութեան վարդապետարան և ծրագիր, արժան է որ գնանի այս գիրքը ամեն հայրենասէր Հայի տունն։

* *
*

ՋԱԼԱԼԷԴԴԻՆ

1877ի ռուս–Թիւրքական պատերազմի ժամանակ Շէյխ Ջալալէդդինի սրշառանքին պատճառով Տաճկաստանի հայերի կրած ազէտների մէկ ազէտարշ նկարագիրն է։ Գրքին սկիզբը կայ հեղինակին, Պ. Րաֆֆիի պատկերը։

* *
*

Վերսկսեալ երկու դիրքեր կը ծախուին «Արմենիա» լրագրի խմբագրատունը. ԿԱՅԾԵՐը Հատոր Ա. 6 ֆր. և 50 սանթիմ։ «Ջալալէդդին»ը, 2 ֆրանգ և 30 սանթիմ. Մարսէյլէ դուրս ամեն տեղի համար վոստի ծախքովը հանդերձ՝ ԿԱՅԾԵՐ Հատոր Ա. 7 ֆրանգ. «Ջալալէդդին» 2 ֆր. և 30 սանթիմ։

Ա. Հ. ԿՐԻԴ ԵՒ ԸՆԿ.

Գաւառքօր Ն. Ռ. Բ. Անգլ. Հնդկաստան

—

Ներածող և արտածող վաճառականաց, յանձնակատար, ապրանքատար և ճանապարհորդաց յանձնակատար, մեծ քանակութեամբ ապրանքների պայմանադիր (քոնթրաթճի) և ամեն տեսակ կալվի գործարանատէր։

Վերոյիշեալ գանազան ճիւղերին մէջ երկար ժամանակէ փորձառութիւն ունենալով, պատրաստ ենք յանձնարարութեամբ ընդունել վաճառքներ, պայմանաւոր վաճառման կամ հրապարակային աճուրդի համար, այնպիսի պայմաններով որ վստահարճաբար շահաբեր և գոհացուցիչ լինին։

Եւրոպական վաճառքների փոխանակութեամբ մեզ կրնանք ղրկել ինչ քանակութեամբ ալ որ ուզուին, Հնդկաստանի մէջ գործուած ապրանքներ, առաջին կարգի ընտիր տեսակներէ, ինչպէս

Լիւքնօայի մանեկական խաղալիկները, Պէնարէսի արույր և ոսկեճամուկ չուխա, Մօրատալատի արույրեայ անօթներ, Տէլհիի ոսկեայ և արծաթեայ գոհարեղէններ, Գաշմիրի շալեր, կեպասներ, Են։

Ընդարձակ տեղեր ունենալով յանձնարարուած ապրանքներ ցոյցի դնելու և ծախելու համար, մենք կարող ենք ամենայն վստահութեամբ յանձնարարել մեր տունը ամեն անոնց որ կուզեն գործով յարաբերութեան մտնել մեզ հետ և մենք չատ ուրախ պիտի լինինք երթէ տեղեկութիւններ և օրինակցուներ ընդունինք այս նպատակով։

Մեր տան մասին տեղեկութիւն առնալ ուզողներն կարող են դիմել հետեւեալ դրամատուներին։

BANK OF BENGAL
ROHILCUND ET KUMAON BANK
AGRA BANK LIMITED

Եթէ պէտք լինի, պատրաստ ենք ուրիշ տեղեր ալ ցոյց տալ տեղեկութիւնների (références) համար։

Ուզէ բան մեզ հաղորդելու համար պէտք է ուղղակի գրել մեզ անգլիերէն լեզուով և մանրամասնօրէն, առաջարկուած գործին վերաբերեալ պայմաններն և դաշինքներ կայացնելով։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐՓՈՒՔԱԼԵԱՆ
Le Gérant : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷՅԼ

Հայերէն տպարան Մ. Փորփուքալեանի
Marseille. — Imprimerie du Midi, M. SCHICKLER rue Vacon 50.